

Պետականության մարտահրավերը

Մաս երրորդ

Արամ Ս. Սայիյան
Պատմ. գիյր. թեկնածու

ԴԵՐՍԻՄԸ 1920 Թ. ԹՈՒՐԿ – ՀԱՅԿԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ

Քոչգիրիի ապստամբության դասերը*

Բանալի բառեր – Դերսիմ, Հայաստանի Հանրապետություն, Թուրքիա, Քրդստան, թուրք-հայկական պատերազմ, Մուսթաֆա Քեմալ, բոլշևիկյան Ռուսաստան, Կարս, սեիդ Ռիզա, Մեհմեդ Նուրի Դերսիմի, Նուրեդդին փաշա:

Հայաստանի առաջին Հանրապետության ու ողջ հայության համար ճակատագրական 1920 թ. աշնանը քեմալական հրոսակների դեմ զինյալ պայքարի դրոշ էին պարզել նաև Դերսիմի քրդերը¹, բայց նույն թշնամու դեմ մարտնչող երկու ճնշված ժողովուրդները այդպես էլ չկարողացան միավորել իրենց ուժերը՝ հնարավորություն տալով առանձին-առանձին պարտության մատնել իրենց, ինչի արդյունքը եղավ ՀՀ անկումը և Դերսիմի քրդերի ազատագրական պայքարի հերթական դրսևորման՝ Քոչգիրիի ապստամբության ծանր պարտությունը:

Պատմության ճակատագրական պահերին մեր կողմից չօգտագործված հնարավորությունների ուսումնասիրության խնդիրն ունի ոչ միայն ճանաչողական, այլև գիտագործնական կարևոր նշանակություն: Ուստի փորձենք հասկանալ՝ ինչո՞ւ Հայաստանի առաջին Հանրապետությունը չկարողացավ իր նպատակներին ծառայեցնել թուրքական բանակի հիմնական հենակետ էրզրումի թիկունքում գտնվող անառիկ երկրամասում բռնկված ապստամբությունը:

Այս առումով հարկ է վերհիշել այն պատմական իրողությունը, որ 1919 թ. գարնանից Հայաստանի Հանրապետության ռազմական ու ներքին գործերի նախարարությունների կողմից իրականացված՝ մահմեդականներով բնակեցված

*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.11.2017:

1 Մեր ձեռքի տակ եղած տեղեկությունները վկայում են, որ Դերսիմի ապստամբները սուննի քրդեր չէին, թեև Նուրի Դերսիմիի նման նրա առաջնորդները հանդես էին գալիս որպես քրդերի իրավունքների պաշտպաններ: Սկզբնաղբյուրներում նրանց տրվող «շիա քրդեր» բնորոշումը կարող էր գործածվել նաև զազա ավանների հանդեպ: Այդ պատճառով ներկա հրապարակման մեջ «շիա քրդեր» պայմանական հասկացության տակ մենք նկատի ենք ունեցել Քոչգիրի ցեղային միությունը, որը բաղկացած էր ինչպես զազա, այնպես էլ կուրմանջի լեզվով խոսող ավելի ցեղերից: Իսկ Դերսիմի մնացած ցեղերի էթնիկ պատկանելության հարցին անդրադառնում ենք այնքանով, որքանով նրանք մասնակցել են ապստամբությանը:

շրջանների հակապետական խռովությունների ճնշումը հանգեցրել էր տասնյակ հազարավոր մահմեդական գաղթականների ներհոսքին դեպի Թուրքիայի արևելյան վիլայեթներ: Այդ շրջանների բնակչությունը, վախենալով, որ Հայաստանի Հանրապետության տարածքը մահմեդականներից մաքրելուց հետո հայկական բանակը կարող է հարձակվել նաև իրենց վրա, սկսեց փնտրել ուժեղ ձեռք՝ հայերից պաշտպանվելու համար, և այդ ձեռքը դարձավ **Մուսթաֆա Քեմալը**: Քեմալի անզիջում քաղաքականությունն իր կողմը գրավեց սուննի քրդերի զգալի մասին, որոնք անկախ Բրդստանի փոխարեն գերադասեցին ապրել Թուրքիայի կազմում:

Միննույն ժամանակ, որպեսզի քրդերին գերծ պահի անգլիացիների ազդեցությունից և կանխի հայ-քրդական համագործակցությունը, Մուսթաֆա Քեմալը 1919 թվականի դեկտեմբերի վերջին էրզրումում հավաքեց քրդական ու արաբական մի շարք ցեղերի ներկայացուցիչների՝ Հայաստանի դեմ պայքարի ուղիները քննարկելու համար: Այս իրադարձությունը բավական էր, որպեսզի առանձին ցեղապետեր, աջակցություն ստանալով տեղի թուրքական կայագրներից, հարձակումներ գործեին Հայաստանի սահմանների ուղղությամբ: Այսպես, 1919 թվականի նոյեմբերի 14-ին մեծաթիվ քրդական ուժեր հարձակման անցնելով Սարիղամիշի ուղղությամբ, առաջ խաղացին դեպի Բաշքոյ: Սակայն հայկական զորքերը, անցնելով հակահարձակման, դուրս շարտեցին նրանց Հայաստանի սահմաններից՝ ազատագրելով Կազան, Արթակալի, Ջերմուկ գյուղերը: Սպանվածների ու գերիների մեջ շատ էին թուրք սպաներն ու զինվորները:

Մինչդեռ նույն շրջանում 1919 թ. ամռան-աշնան ամիսներին, Դերսիմում անհանգիստ իրավիճակ էր: Փարսիզում ընթացող բանակցությունները հաղթող տերությունների և Օսմանյան կայսրության միջև, ինչպես նաև անգլո-ֆրանսիական զորքերի հայտնվելը Ուրֆայում ու Մարաշում և Անատոլիայում օրեցօր թափ հավաքող քեմալական շարժումը քաղաքականապես կիսել էին Դերսիմը: Ցեղապետերի մի մասը հակված էր անգլիական գերիշխանության հաստատմանը, եթե պաշտոններում նշանակվեին քրդերը: Իսկ փոքր մասը՝ Հասան Հայրիի² գլխավորությամբ, կողմ էր թուրքական գերիշխանության պահպանմանը, սակայն ներքին ինքնավարությամբ: Դերսիմից հարավ ընկած Այնթապի և Մարաշի քրդերի կեսից ավելին շիա էին, ուստի չէին ուզում սուննի թուրքերի իշխանությունը և համագործակցում էին Զելադեթիների հետ: Բացի դրանից՝ տարածքային առումով գտնվելով Հայաստանի Հանրապետությունից համեմատաբար մեծ հեռավորության վրա, նրանք չէին վախենում հայկական հավակնություններից:

Ավելին, քեմալական շարժումը անհանգստացրել էր ոչ միայն նրանց, այլև Դերսիմի ցեղապետերին և անգլիացիներին: Այս հողի վրա էլ տեղի ունեցավ երկու կողմերի ռազմաքաղաքական մերձեցումը: Մեծ Բրիտանիան նրանց մոտ ուղարկեց քրդական հարցի գիտակ մայոր Նոելին³, որի առջև խնդիր էր դրված պարզելու շիա քրդերի վերաբերմունքը քեմալականների հանդեպ և վերջիններիս դեմ նրանց ներուժ կարողակնության օգտագործման հնարավորությունները: Մայոր Նոելն արժանացավ շատ ջերմ ընդունելության: Նրան ուղեկցում էին Զելադեթ ու Քամուրան Ալի Բադրխանները և Զեմիլփաշազադե Էքրեմ բեյը Դիարբեքիրից՝ 15 հեծյալների ուղեկցությամբ: Մալաթիայում նրանց անձամբ դիմավորեց մյութեսերիֆ Խալիլ Ռահմի բեյ Բադրխանին, իսկ Էյազիգից տեսակցելու համար ժամանեց տեղի

² Հասան Հայրի, 1881-1925, դերսիմցի թրքամետ գործիչ, շեյխ հասանը ցեղի ցեղապետ Քանթոզադե Մուրթազա աղայի որդին: Իր ծննդավայր Խոզաթում նախնական և միջնակարգ կրթություն ստանալուց հետո ընդունվում է Ստամբուլի աշիրեթական ռազմական դպրոցը և 1898-ին ստանում հեծելազորի լեյտենանտի կոչում: Հասան Հայրին քեմալական շարժման ակտիվ կողմնակից էր: 1920-ին Դերսիմից ընտրվում է ԹԱՄԺ-ի պատգամավոր: 1920-1921 թթ. եղել է Քոչգիրիի ապստամբության ակտիվ հակառակորդը: 1925-ին մեծ ջանքեր է գործադրել, որպեսզի Դերսիմը չմիանա շեյխ Մայիդի ապստամբությանը, սակայն վերջինիս ճնշվելուց հետո ձերբակալվել է՝ շեյխ Մայիդի աջակցելու անհիմն մեղադրանքով և նույն թվականի նոյեմբերի 23-ին մահապատժի ենթարկվել:

³ Մայոր Նոելն առաջին անգամ Թուրքիայի քրդաբնակ շրջաններում էր եղել նույն թվականի ապրիլին: Նա շրջել էր գերազանցապես սուննի քրդերով ու արաբներով բնակեցված Նուսայբիմում և Դիարբեքիրում:

վալի Ալի Գալիբ բեյը: Օգտագործելով այս առիթը՝ Խալիլ Ռահմի բեյ Բաղրխանին Մալաթիա կանչեց մի շարք քուրդ ցեղապետերի և սկսեց նախապատրաստվել հակաթուրքական ապստամբության: Մալաթիայից 20 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Շիրտ վայրում նրա գլխավորությամբ տեղի ունեցավ քուրդ ցեղապետերի ու շեյխերի ժողովը, որտեղ «Քրդերի իրավունքների պաշտպանության կոմիտեի» անունից հռչակվեցին Քրդստանի անկախության հիմնական սկզբունքները, որոնք ուղերձի տեսքով ուղարկվեցին որոշ քուրդ շեյխերի: Ապստամբների մեջ շատ էին նաև Դերսիմի ցեղապետերն ու շեյխերը:

Սակայն ապստամբության նախապատրաստումը համընկավ Սեբաստիայում 1919 թ. սեպտեմբերի 4–11–ին Մուսթաֆա Քեմալի գլխավորությամբ ընթացող «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների» համաթուրքական կոնգրեսին, որն, իհարկե, չէր կարող չանհանգստանալ քրդերի ակտիվացումից: Ուստի Քեմալին հաջողվեց արագորեն ձնշել ապստամբության այս նախնական փորձի մասնակիցներին, որոնք առանց մարտի ցրվեցին, իսկ Նոեյն անցավ Հալեպ: Սակայն Քեմալը դեռևս բավականաչափ հզոր չէր, որպեսզի լայնածավալ գործողություններ սկսեր ապստամբների դեմ, ուստիև ստիպված էր սիրաշահել նրանց: Որպեսզի Դերսիմը հետ պահեն ապստամբությունից, Մուսթաֆա Քեմալի հրամանով Մեչո և Դիափ աղաներն նշանակում են ԹԱՄԹ-ի պատգամավորներ՝ Դերսիմից, իսկ որոշ ժամանակ անց նրանց են միանում նաև Մուսթաֆա Զեքքի, Ռեմիզ, Արդուլիակ Թևֆիք և Հասան Հայրի բեյերը⁴:

1919 թ. վերջին ամիսներին և 1920 թ. գարնանը տեղի ունեցան վճռորոշ իրադարձություններ, որոնք արմատապես փոխեցին ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում: Էրզրումի և Սվազի կոնգրեսներից հետո Մուսթաֆա Քեմալին վերջնականապես հաջողվեց իր կողմը գրավել Արևմտյան Հայաստանի քրդերին: 1920 թ. գարնան սկզբից Հայաստանի Հանրապետության արևմտյան սահմանների մոտ սկսեցին կուտակվել թուրք-քրդական զգալի ուժեր՝ լուրջ սպառնալիք ստեղծելով նրա գոյության համար:

Դրան նպաստեց մյուս, էլ ավելի հզոր սպառնալիքի՝ Խորհրդային Ռուսաստանի մուտքը Հարավային Կովկաս: 1920 թ. ապրիլի 28–ին խորհրդայնացվեց Ադրբեջանը, և մի քանի օր անց բոլշևիկյան ռուս-ադրբեջանական բանակներն արդեն գրոհում էին Հայաստանի արևելյան սահմանները: Մայիսին նրանց հաջողվեց գրավել Արցախը, իսկ հուլիսին՝ Զանգեզուրի հարավով ցամաքային կապ հաստատել քենալականների հետ: Այսպիսով Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց մահացու աքցանի մեջ: Անտանտի տերությունները ոչինչ չարեցին իրենց դաշնակցին փրկելու համար, այլ միայն բավարարվեցին 40000 համազգեստ, 25000 հրացան և փամփուշտներ ուղարկելով⁵:

Հակառակորդի ձնշումը հետ մղելու և քենալականներին աքցանի մեջ առնելու համար ուշանում էր հունական լայնամասշտաբ հարձակումն արևմտյան ճակատում: Իսկ նույն պատմաշրջանում Հայաստանի Հանրապետությանը սահմանից ոչ հեռու գտնվող Դերսիմում նոր թափ հավաքող շիա քրդերի անհավասար գոյամարտն աննկատ էր մնացել ՀՀ հետախուզության համար: Մինչդեռ՝ երբ 1920 թ. գարնանից ակտիվացան քենալական էմիսարների կողմից սադրված Հայաստանի Հանրապետության քրդական ու թուրք-թաթարական բնակչության հակակառավարական ելույթները, նույն շրջանում ակտիվացավ նաև դերսիմցիների պայքարը:

1920 թվականի մարտից մինչև մայիս ընկած ժամանակահատվածում Շիրակի նահանգապետ Կարո Սասունին, Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանյանի հետ միասին հանդիպում են քրդական և թուրք-թաթարական համայնքների ազդեցիկ ներկայացուցիչների հետ և փորձում նրանց համոզել զենքը վայր դնել ու խնդիրները լուծել խաղաղ ճանապարհով: Հայաստանի ռազմա-քաղաքական ղեկավարու-

4 Տե՛ս **Dersimi N.**, Kürdistan tarihinde Dersim, Halep, 1952, s. 130.

5 Տե՛ս **Ter Minassian, Anahide**, La république d'Arménie. 1918–1920. La mémoire du siècle, Brussels, 1989, p. 196.

թյունը ցանկանում էր քեմալական ազդեցությունից դուրս բերել հատկապես քրդական ազգաբնակչությանը: Առանձին հանդիպումներ ունենալով քուրդ ղեկավարների հետ՝ Կարո Սասունին և Ստեփան Դորդանյանը բացատրում էին հայ-քրդական համերաշխության անհրաժեշտությունը՝ ի հակակշիռ թուրք-թաթարական սերտ դաշինքի, սակայն ընդհանուր առմամբ հաջողության չհասան. քրդերը չմիացան հայերին և շարունակում էին թշնամական գործողությունները:

Ակնհայտ էր, որ քեմալականների սադրանքով ձեռնարկվող այդ քայլերը ՀՀ ի դեմ հարձակման նախապատրաստական աշխատանքների մի մասն էին կազմում: Դրա, ինչպես նաև քեմալա-բոլշևիկյան մերձեցման մասին ՀՀ կառավարությանը հստակ տեղեկություններ էին հաղորդել հայկական հատուկ ծառայությունները՝ հետախուզությունն ու հակահետախուզությունը:

Այսպես, դեռևս 1919 թ. մայիսի 1-ով և 16-ով թվագրված՝ հետախուզության սպաներ պորուչիկ Հովհան Խան-Կոտուրսկու (ղեկավար), լեյտենանտ Վարանովսկու և շտաբ-կապիտան Տիգրան Դեղյանի զեկուցագրերի համաձայն՝ թուրքերը Տրապիզոնից մինչև վրացական սահմանն ընկած տարածքներում զանգվածաբար զինում են լազերին և տեղի թուրքերին, Տրապիզոնում տեղակայված է 5 հազարանոց թուրքական զորախումբ, կատարվում է զորահավաք իբր՝ ժանդարմերիայի շարքերը լրացնելու համար, բայց իրականում գորակոչվածներն ուղարկվում են Էրզրում՝ Հայաստանի սահմաններին մոտ: Իսկ արտաքին քաղաքականության առումով ընդգծվում էր, որ թուրքերն իրենց երկրի փրկությունը տեսնում են միայն ռուս բոլշևիկների մեջ և Տրապիզոնում շատ ուժեղ է բոլշևիկների ազդեցությունը⁶:

Այսինքն՝ ՀՀ իշխանությունները 1920 թ. Մայիսյան խռովություններից դեռ մեկ տարի առաջ գիտեին թուրք-բոլշևիկյան մերձեցման և թուրքերի կողմից Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստման մասին: Հայերի համար դրությունն էլ ավելի էր բարդանում նրանով, որ Կարսի մարզում և հատկապես՝ նրա հյուսիսային շրջաններում՝ Արդահանում, Արդվինում և Օլթիում թուրք-քուրդ-ադրբեջանական միացյալ ուժերին աջակցում էր նաև Վրաստանը, որն իր շահերն ուներ տարածաշրջանում, մասնավորապես ցանկանում էր Հայաստանից զավթել վերը նշված տարածքները և բռնակցել դրանք⁷:

Բայց չպետք է մոռանալ, որ այս նախապատրաստությունների շրջանում վտանգված էր ոչ միայն հայկական բանակի թիկունքը՝ Կարսի մարզում ու հարակից շրջաններում, այլև հենց իր՝ թուրքական բանակի թիկունքը: 1920 թ. գարնան ու հատկապես ամռան ամիսներին զինված ելույթներ էին տեղի ունենում Դերսիմում՝ ընդդեմ քեմալականների իշխանության:

Անշուշտ, 1919 թ. աշնանը Մուսթաֆա Քեմալին հաջողվել էր թույլ չտալ քրդական ապստամբության բռնկումն արևելյան վիլայեթներում և հատկապես՝ Դերսիմում, սակայն իրավիճակն այնտեղ ավելի ու ավելի էր լարվում: Դերսիմցիները հասկացել էին, որ թուրքերը քրդերին ինքնավարություն տալու նպատակ չունեն: Ավելին, 1920 թ. հունվարի 28-ին քեմալականների ճնշման տակ օսմանյան պառլամենտի կողմից ընդունված Ազգային ուխտը ցրեց քրդերի բոլոր հույսերը՝ կապված ինքնավար Քրդստանի հետ: Իսկ նույն թվականի մարտի 16-ին տեղի ունեցավ Կ. Պոլսի գրավումը դաշնակիցների կողմից, ինչը էլ ավելի ծայրահեղացրեց թուրք հասարակության տրամադրությունները: Այդ պայմաններում քրդական ինքնավարության մասին խոսելը հավասարեցվում էր հայրենիքի հանդեպ դավաճանության:

Ու թեև քրդերի գերակշիռ մեծամասնությունը նախընտրեց հավատարիմ մնալ թուրքերին, սակայն քրդական վերնախավի գիտակից մասի համար պարզ էր, որ

6 Տե՛ս Վիրաբյան Վահիկ Հ., Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Եր., 2003, էջ 57-58: [Virabyan Vanik H., Haykakan hetakhuzutyuny Arajin Hanrapetutyany tarinerin (1918-1920), Yerevan 2003, p. 57-58] .

7 Քանի որ վրացական պետության քաղաքականության ուսումնասիրությունը դուրս է այս հոդվածի հետաքրքրությունների շրջանակից, նպատակահարմար ենք գտել խնդիրը ներկայացնել հպանցիկ: Ավելի մանրամասն տե՛ս Վիրաբյան Վահիկ Հ., նշվ. աշխ., էջ 74-75: [Virabyan Vanik H., ., op. cit., p. 74-75] .

երբ կարգավորվեն թուրքերի հարաբերություններն արտաքին թշնամիների հետ, իսկ դա վաղ թե նուշ տեղի էր ունենալու, ապա իրենք դատապարտվելու են թրքացման, կամ կոչվելու են հայերի ձակատագիրը: 1920 թ. գարնանը «Քրդստանի վերածննդի ընկերության» անդամներին հաջողվել էր կապեր հաստատել Դիարբեքիրի, Վանի, Բիթլիսի և այլ շրջանների ցեղապետերի հետ: Կապը հիմնականում պահպանվում էր Հուսեյն Աբդալ միաբանության շեյխերի միջոցով: Հենց այդ միաբանության նստավայրում՝ Քանգալ սանջակի Ելլիջե կազայում, 1920 թ. սկզբին տեղի ունեցավ ջանքեզ, քուրմեշան և այլ ցեղերի առաջնորդների ժողով, որտեղ նրանք երդվեցին պայքար սկսել Քրդստանի անկախության համար⁸:

Քրդական հասարակության մյուս խավը, որը նույնպես ակտիվորեն ներգրավված էր Քրդստանի անկախության նախապատրաստման գործին, դա սպայությունն էր: Քուրդ սպաներից ամենահեղինակավորը ջիբրան ցեղի առաջնորդ, գնդապետ Հալիթ բեկն էր⁹, ով Սևրի պայմանագրի ստորագրումից հետո սկսեց եռանդուն աշխատանքներ տանել նրա քրդական կետերի իրականացման համար:

Սակայն միայն գնդապետ Հալիթ բեկը և նրա առաջնորդած «Քրդստանի Անկախության կոմիտեն» չէին, որ աշխատանքներ էին տանում համաքրդական ապստամբության նախապատրաստման համար: Դերսիմում ակտիվ գործունեություն էին սկսել «Քրդստանի վերածննդի ընկերության» նախկին անդամները: Իր ակտիվությամբ հատկապես աչքի էր ընկնում անասնաբույժ Մեհմեդ Նուրի Դերսիմին (Բայթար Նուրի)¹⁰, որն ուղարկված լինելով Ստամբուլի «Քրդստանի վերածննդի ընկերության» կողմից, սկզբնական շրջանում իր գործունեությունն էր ծավալում Զարա, Տևրիկ, Կանգալ, Հաֆիթ, Ումրանիե, Սինջան, Բաշփնար և Դոմուրջա կազաներում: Նա խոշոր ավատատիրոջ որդի էր և սերտ կապեր ուներ Դերսիմի ցեղապետերի ու շեյխերի հետ: Մեհմեդ Նուրի Դերսիմին Քոչգիբիի Մուսթաֆա փաշայի հետ Մուդրոսի գինադարից հետո մեկնել էր Ստամբուլ՝ միանալու սեիդ Աբդուլ Քադիրի հիմնադրած «Քուրդիստանի վերածննդի ընկերությանը», սակայն հիասթափվելով վերջինիս որդեգրած՝ Դամադ Ֆերիդ փաշայի կառավարությունից ինքնավարություն խնդրելու քաղաքականությունից, 1920 թ. հոկտեմբերին վերադարձել էր Ումրանիե և ձեռնամուխ եղել մինչ այդ արդեն սկսված ապստամբության կազմակերպմանը:

Նրա նման արմատականորեն տրամադրված մեկ այլ գործիչ՝ սեիդ Ռիզան¹¹

8 Տես **Гасратян М. А.**, Курды Турции в новейшее время, Ереван 1990, с. 33. [**Hasratyan M. A.**, Kurdi Turcii v novejshee vremya, Yerevan 1990, p. 33].

9 **Հալիթ բեկ (քրդ.) կամ՝ բեկ (թուրք.) Ջիբրանի**, 1882–1925, գնդապետ, թուրքական բանակի սպա, մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, ռուսական զորքերի դեմ անձնուրաց կռվելու համար ստացել է գնդապետի կոչում: Պատերազմի ավարտից հետո սկսում է զբաղվել Քրդստանի անկախության հարցով: Մասնավորապես Շերիֆ փաշայի հետ մասնակցել է Փարիզի հաշտության կոնֆերանսում ընթացող այն նիստերին, որոնք վերաբերել են Թուրքիայի արևելյան վիլայեթները Հայաստանի և Քրդստանի միջև բաժանելուն: Վերադառնալով Թուրքիա՝ սկսում է սերտ համագործակցել սենատոր սեիդ Աբդուլ Քադիրի, օսմանյան պառլամենտի պատգամավոր Ջիա Յուսուֆ բեյի հետ: 1920 թ. Մ. Քենալի կողմից նշանակվում է թուրքական բանակի արևելյան խմբավորման տեսուչ: Նույն թվականի վերջերին 24 ընկերների հետ էր գրումում (Կարին) ստեղծում է «Քրդստանի Անկախության կոմիտե» գաղտնի կազմակերպությունը, որն ավելի շատ հայտնի է «Ազադի» կոմիտե անվամբ: Լոզանի կոնֆերանսից հետո, հասկանալով, որ դաշնակիցներն այլևս չեն օգնելու քրդերին, ծրագրում է համաքրդական ապստամբություն՝ քրդերի համար սրբազան Նովրուզի տոնի ժամանակ: Սակայն նա չի կարողանում իր կողմը գրավել Վարդույի պեյի քրդերին, որոնք ոչ միայն չեն միանում նրան, այլև ապստամբության մասին հայտնում են թուրքական իշխանություններին: Իմանալով այդ մասին՝ թուրքերը 1924 թ. դեկտեմբերի 20-ին էրզրումում ձերբակալում են նրան և տեղափոխում Բիթլիս (Բաղեշ), որտեղ էլ այլ ձերբակալվածների՝ Ջիա Յուսուֆ բեյի, նրա եղբոր և այլոց հետ 1925 թ. ապրիլի 14-ին Արևելյան վիլայեթների անկախության դատարանի դատավճռով գնդակահարվել է:

10 **Մեհմեդ Նուրի Դերսիմի (Բայթար Նուրի)**, 1890–1973, քուրդ ազգային գործիչ, մասնագիտությամբ անասնաբույժ, մասնակցել է Քոչգիբիի և Դերսիմի ապստամբություններին, եղել է սեիդ Ռիզայի աջակիցը: Դերսիմի ապստամբության պարտությունից հետո արտագաղթել է Սիրիա, որտեղ էլ գրել է Դերսիմի և այնտեղ տեղի ունեցած ապստամբությունների պատմությունը:

11 **Սեիդ Ռիզա**, - 1863–1937 - զազա ցեղապետ Օվաջիքից, քրդական ազգային գործիչ, բազմիցս ապստամբել է թուրքական իշխանությունների դեմ, համարվել է քեմալական կառավարության անհաշտ հակառակորդը, եղել է Քոչգիբիի 1920–1921 թթ. և Դերսիմի 1937–1938 թթ. ապստամբությունների գլխավոր կազմակերպիչներից մեկը: 1937 թ. սեպտեմբերին ձերբակալվում է և թուրքական դատարանի որոշմամբ նոյեմբերին մահապատժի է ենթարկվում:

նույնպես ոչ մի պայմանով չէր համաձայնվում համագործակցել թուրքերի հետ և ակտիվ աշխատանքներ էր տանում քրդական ցեղերը համախմբելու համար: Ըստ Նուրի Դերսիմիի, Արևմտյան և Արևելյան Դերսիմները կարող էին պատերազմի դաշտ դուրս բերել 45 հազարական զինվոր¹²:

Մինչ այդ՝ դեռևս 1920 թ. հուլիսին, քրդական ջոկատները Մստոյի ղեկավարությամբ գրոհել էին Զառա սանջարում տեղակայված զինվորական անցակետերը՝ գերելով բազմաթիվ սպաների և զինվորների¹³: Իսկ նույն ամսվա վերջում շադան ցեղի առաջնորդ Փաշոն, որը նախկինում եղել էր ժանդարմական ուժերի սպա, գրավել էր Երզնկայի սանջաքի Ռեֆահիյե քաղաքը և իրեն հռչակել տեղի քրդական ջոկատների հրամանատար¹⁴:

Դերսիմի ապստամբությունը ճնշելու համար բավարար ուժեր չունենալու պատճառով Անկարայի կառավարությունը ստիպված էր պաշտոններ առաջարկել նրա ղեկավարներին: Այդ նպատակով քոչգիրի ցեղի առաջնորդ Ալիշանը նշանակվում է Ռեֆահիյե սանջաքի կայանականի տեղակալ, իսկ նրա եղբայր Հայդարը՝ Սեբաստիայի Ումրանիե սանջաքի կայանական¹⁵: Սակայն Մուսթաֆա Քեմալը սխալվեց իր հաշվարկներում. ստանալով այս պաշտոնները՝ Ալիշանը և Հայդարը ոչ միայն ետ չբաշխեցին ապստամբությունից, այլև օգտագործելով իրենց պաշտոնական դիրքը, նրան ավելի կազմակերպված բնույթ հաղորդեցին: Նրանց հաջողվեց հասնել մինչև Խոզաթ՝ իրենց շուրջը համախմբելով այն ցեղերին, որոնք համակրում էին քրդական ազգային շարժմանը և անկախ Քրդստանի ստեղծման ջերմ կողմնակից էին:

Այսպիսով, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրեին հայ-թուրքական հակամարտության հանդեպ քրդերի դիրքորոշումը միասնական չէր: Բայց չնայած դրան՝ քեմալականներին հաջողվել էր իրենց դաշնակիցը դարձնել սուննի քրդերի զգալի մասին, մինդեռ հակաթուրք տրամադրություններով համակված Դերսիմի զագա քրդերի պայքարը շարունակում էր կղզիացած մնալ այդ երկրամասի շրջանակներում:

Ուստի Խորհրդային Ռուսաստանից ահռելի օգնություն ստանալուց հետո, երբ 1920 թ. սեպտեմբերի 22-ի լույս 23-ի գիշերն առանց պատերազմ հայտարարելու, թուրքական զորքերը հարձակվեցին Հայաստանի վրա, Քյազըմ Կարաբեքիր փաշայի հրամանատարության ներքո կռվում էր նաև XI քրդական դիվիզիան Հիլմի բեյի գլխավորությամբ¹⁶: Քրդերն ակտիվ մասնակցություն ունեցան հայ-թուրքական պատերազմի մի շարք դրվագներում: Նրանք հատկապես մեծաքանակ և խիստ ակտիվ էին հարավային՝ Սուրմալուի ռազմաձևակառույցում, որտեղ թուրքական զորքերի կազմում փորձում էին ջախջախել Դրաստամատ Կանայանի հրամանատարությամբ գործող, իրենցից շատ ավելի փոքրաթիվ հայկական զորքերին: Սակայն չնայած բոլոր ջանքերին ու ահռելի կորուստներին՝ նրանց այդպես էլ չի հաջողվում ռազմակալել Սուրմալուն, և միայն Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին ստիպեց Սուրմալուի հայկական զորախմբին բնակչության հետ անցնել Արաքսի ձախ ափը¹⁷:

Իսկ ահա Դերսիմում 1920 թ. ամռան վերջին-աշնան սկզբին ակտիվացած քրդական ջոկատների հարձակումները թուրքական բանակային և ոստիկանական պահակակետերի վրա արդեն կրում էին պարբերական բնույթ և որպես կանոն՝

12 Stü Olson R., The Emergence of Kurdish Nationalism and Sheikh Said Rebellion, Austin, 1998, p. 29.

13 Stü Гасратян М. А., указ. соч., с. 33. [Hasratyan M. A., ot. cit., p. 33]

14 Stü Şadillili V., Türkiye'de Kürtçülük ve isyanlar, Ankara, 1980, s. 37.

15 Stü Гасратян М. А., указ. соч., с. 34. [Hasratyan M. A., ot. cit., p. 34]

16 Stü Российский Государственный Военно-исторический Архив (РГВИА), ф. 25873, д. 1460, с. 41.

[Rossiskiy Gosudarstvennyy Voенно-istoricheskiy Arkhiv (RGVIA), f. 25873, d.1460, s.41]

17 Սուրմալուի ձակատամարտի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Համլետ Մ. Գևորգյան, Արթուր Ս. Ղազարյան, Սուրմալուի ձակատամարտը, «ՎԷՄ», համախայկական հանդես, Ը (ԺԴ) տարի, N 1(53) հունվար-մարտ, Եր, 2016: [Hamlet M. Gevorgyan, Artur S. Ghazaryan, Surmalui tchakatamarty, Vem, hamahajkakan handes, Y (ZhD) tari, tiv 1 (53) hunvar-mart, Yerevan, 2016].

ավարտվում էին քրդերի հաղթանակով, որոնց տրամադրության տակ էին անցնում մեծ քանակությամբ սպառազինություն, սննդամթերք, ինչպես նաև ձիեր և ջորիներ: Զարգացնելով առաջին ռազմական հաջողությունները՝ Դերսիմից դուրս եկած զազա քրդերի ջոկատները 1920 թ. հոկտեմբերի 20-ին, այսինքն՝ այն նույն ժամանակ, երբ թուրքական զորքերը մոտենում էին Կարսին, Էդլին վայրում գրավեցին թուրքական բանակին պատկանող մեծ զինապահեստներ:

Քոչգիրիի գեղապետերից Ալիշանը Դերսիմից եկած ապստամբ ջոկատների հետ Քուրուչայ-Քենահ (Կամախ) շրջանից անցնելով Օվաջըքի շրջան՝ այդտեղ միացավ մի շարք այլ գեղապետերի, գնաց Խոզաթ և այնտեղ նոյեմբերի 15-ին Չմշկածագի ու Օվաջըքի շրջանների գեղապետերի հետ հրավիրեց մեծ ժողով, որտեղ որոշում ընդունվեց համախմբել ուժերը՝ ազգային իրավունքները նվաճելու համար¹⁸: Ժողովը Անկարայի կառավարությանն ուղարկեց պահանջագիր՝ բաղկացած 4 կետերից, որոնք էին՝

-Անկարայի կառավարությունը պետք է արագ պատասխանի, թե ինչպիսին է իր դիրքորոշումը Քրդստանի ինքնավարության նկատմամբ,

-Էյլազիգի, Մալաթիայի, Սվասի և Էրզինջանի բանտերում գտնվող բոլոր քուրդ բանտարկյալները պետք է ազատ արձակվեն,

-Քրդական մեծամասնությամբ տարածքներից պետք է հետ կանչվեն բոլոր թուրք պաշտոնյաները,

-Թուրքական զորքերը պետք է հետ կանչվեն Քոչգիրիի շրջանից¹⁹:

Այս պահանջագիրը գրվել էր Նուրի Դերսիմիի հոր՝ Իբրահիմի ձեռքով և հանձնվել արբասան գեղի առաջնորդ Մեշո աղային, որպեսզի նա փոխանցի այն Դերսիմի մյուսների՝ Ռոզա բեյին: Մեշո աղան պահանջագիրը Ռոզա բեյին հանձնելու ժամանակ սպառնացել էր, որ եթե 24 ժամվա ընթացքում պատասխանը չգա, ապա նրա աչքերը կհանի²⁰:

Անկարայի կառավարությունը Խարբերդից հանձնաժողով ուղարկեց Դերսիմ՝ քննարկելու վերջնագիրը, բայց նրա անդամները հետ ուղարկվեցին: Ապստամբները նոյեմբերի 25-ին նոր հեռագիր ուղարկեցին Անկարա՝ նշելով, որ եթե Դիարբեքիի, Էյլազիգի, Խարբերդի, Վանի և Բիթլիսի (Բաղեշի) վիլայեթների տարածքում չստեղծվի անկախ Քրդստան պետություն, ապա արևմտյան Դերսիմի գեղապետերը հասնելու են դրան զենքի ուժով²¹: Քենալական կառավարությունը ժամանակ շահելու նպատակով Խարբերդի վալիի միջոցով հայտնեց ապստամբության ղեկավարներին, որ ընդհանուր առմամբ համաձայն են քրդերի պահանջների հետ և նրանք պետք է դադարեցնեն ռազմական գործողություններն ու բանակցություններ սկսեն: Սակայն դրան զուգահեռ թուրքերը վերադասավորեցին իրենց ուժերը և սկսեցին մարտեր մղել Սեբաստիայի շրջակայքի ապստամբների դեմ: Եվ քանի որ Դերսիմում ձմեռը շուտ է գալիս և շատ ձյունառատ է, դերսիմցիները չկարողացան օգնության գնալ նրանց: Մինչդեռ ապստամբության ակտիվ փուլի հետաձգումը մինչև գարուն ձեռնառու էր քենալականներին, այլ ոչ թե քրդերին:

1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրված Ալեքսանդրապոլի պայմանագրով վերջացավ թուրք-հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը հնարավորություն տվեց թուրքական հրամանատարությանը զգալի քանակով զորքեր հանել արևելյան ռազմաձևկատից և ուղարկել Դերսիմ: Մյուս կողմից՝ քենալականները սիրաշահում էին որոշ տատանվող քուրդ առաջնորդների՝ խոստանալով նրանց բարձր պաշտոններ, որպես կանոն՝ վալի, կայմական կամ ԹԱՄԺ-ի պատգամավոր, ինչպես նաև նյութական բարիքներ: Նրանց հաջողվեց Մեշո և Դիյափ աղաներին դարձնել իրենց կողմը՝ նշանակելով ԹԱՄԺ-ի պատգամավորներ: Սակայն, թուրքերին

18 **Şadillili V.**, *ibid.*, s. 38.

19 **Dersimi N. M.**, *ibid.*, s. 127-129.

20 **Şadillili V.**, *ibid.*, s. 39.

21 **Olson R.**, *ot. cit.*, p. 30.

չհաջողվեց գլխատել ապստամբությունը: Մեչո և Դիյափ աղաների, ինչպես նաև Զեքի, Ահմեդ Ռեմզի, Աբդուլիս Թեֆիք և Հասան Հայրի բեյերի՝ Անկարա մեկնելուց հետո ապստամբության փաստացի ղեկավար դարձավ սեիդ Ռիզան, որին հաջողվեց համախմբել ապստամբական ուժերը և մեծ ծավալի կազմակերպչական աշխատանք տանել:

Միրաշահման գանազան միջոցներով քեմալական կառավարությունը կարողացավ ձմռանը հետ պահել քրդերին ակտիվ մարտական գործողություններից և մեծաքանակ զորքերով շրջապատել Դերսիմը: Եվ ավարտելով անհրաժեշտ քանակությամբ զորքերի տեղաբաշխումը՝ թուրքական կողմը սկսեց նախահարձակ լինել: Առաջին բախումը տեղի ունեցավ դեռ 1921 թ. հունվարին: Փետրվարի 12-ին թուրքական զորախումբը շարժվեց Ումրանիեի ուղղությամբ: Ստանալով այդ տեղեկությունը՝ քրդերը ցանկացան անմիջապես ոտքի կանգնել, սակայն ապստամբության ղեկավարները գերադասեցին մի քիչ էլ սպասել, մինչև որ ձյունները հալվեն և ավելի շատ ցեղեր կարողանան օգնության գալ: Նրանք կարծում էին, թե թուրքերի հիմնական ուժերը կսկսեն հարձակվել գարնան սկզբին, երբ Դերսիմի ճանապարհները կբացվեն և ոչ այնքան՝ մարտական գործողություններ կվարեն, այլ կաշխատեն իրենց կողմը գրավել ապստամբներին, փակել ազգային կազմակերպությունները, իսկ առավել արմատականորեն տրամադրվածներին՝ ձերբակալել և աքսորել արևմտյան երկրամասերը:

Մինչդեռ ավարտելով զորքերի վերախմբավորումը՝ թուրքական կողմը վերջնագիր ներկայացրեց ապստամբներին՝ պահանջելով հանձնել իրենց մոտ եղած ողջ զենքը և անձնատուր լինել. հակառակ դեպքում անխնա կոչնչացվեն նրանց գյուղերը: Որպեսզի քրդերը համոզվեն, որ թուրքերը կատարելու են իրենց սպառնալիքը, Ումրանիեն գրաված գնդի հրամանատար Հալիս բեյը 1921 թ. մարտի 4-ին ձերբակալեց տեղի մի քանի քուրդ գործիչների և ուժեղացված վաշտի ուղեկցությամբ ուղարկեց Զառա: Սակայն Յազրիհաջիում տեղի քրդական ջոկատը գլխովին ջախջախեց այդ վաշտը և ազատեց ձերբակալվածներին: Այս դեպքերով էլ սկսվեց ապստամբության ռազմական փուլը: Քրդական ջոկատները Մահմուդ, Ազամաթ և Աշքի բեյերի հրամանատարությամբ 1921 թ. մարտի 6-ին շրջապատեցին Ումրանիեն ու պահանջեցին գնդապետ Հալիս բեյից, որ նա հանձնի գունդը և ազատի քաղաքը: Սակայն Հալիս բեյը մերժեց վերջնագիրը՝ խնդրելով, որ թողնեն գունդը վերադառնա Սեբաստիա: Այս առաջարկը մերժվեց և մեկ օր տևած մարտերից հետո ապստամբներին հաջողվեց պարտության մատնել գնդին ու ազատագրել Ումրանիեն: Քաղաքի կենտրոնում բարձրացվեց Քրդստանի դրոշը, հենց այդտեղ էլ Հալիս բեյը գնդակահարվեց հատուկ ստեղծված քրդական տրիբունալի կողմից կայացված մահվան դատավճռի հիման վրա: Ապստամբների ձեռքն անցավ մեծ քանակությամբ զենք, զինամթերք, ռազմական հանդերձանք, ինչպես նաև 1000 ձի և բազմաթիվ ջորիներ²²:

Միայն անհրաժեշտ նախապատրաստություններից հետո թուրքական զորքերի կենտրոնական խմբավորման հրամանատար Նուրեդդին փաշան 1921 թ. ապրիլի 11-ին սկսեց լայնածավալ հարձակողական գործողությունները: Ծավալվեցին կատաղի մարտեր ինչպես Դերսիմ-Երզնկա, այնպես էր Սեբաստիա-Քոչիսսար-Զարա և Սեբաստիա-Քանգալ ուղղություններով: Որքան էլ անձնուրաց էին պայքարում քրդերը, նրանց աշխարհագրորն անկարող էր դիմադրել թուրքերի կանոնավոր բանակի ճնշմանը: Թուրքական զորքերը մեկը մյուսի հետևից գրավում էին գյուղերը՝ հրի ու սրի ճարակ դարձնելով դրանք: Չնայած լուրջ պարտություններին, որոնց պատճառով ապստամբների շարքերում նկատվում էր հուսալքություն և դասալքություն, ապստամբական ուժերը, այնուամենայնիվ, ծանր կորուստներ էին պատճառում թուրքական զորքերին:

Քոչգիրիում պայքարը շարունակող վերջին ապստամբ ջոկատը 1921 թ. մայիսի 30-ին Լըլըջ լեռնանցքում շրջապատվեց կառավարական գերակշիռ ուժերի կողմից

22 Տե՛ս Գасратян М. А., указ. соч., с. 36. [Hasratyan M. A., ot. cit., p. 36].

և գերեվարվեց: Գերիների մեջ էին Ալիշանը, Ալիշերը, Նուրի Դերսիմին, Փաղօղլու Մահմուդը, Հայդարը, ևս 32 ազդեցիկ քրդեր ու 600 շարքային մարտիկներ, որոնք ուղարկվեցին Սեբաստիա՝ թուրքական կենտրոնական բանակի շտաբը: Սեբաստիայում հրապարակվեց պաշտոնական հաղորդագրություն, ըստ որի, մարտերի ընթացքում ոչնչացվել է 123 ապստամբ, գերի է վերցվել 159 մարդ:

Քոչգիրիի ապստամբությունը պարտություն կրեց, սակայն հակաթուրքական շարժումը Դերսիմում չդադարեց: Այժմ պայքարը շարունակվում էր ապստամբության պարտությունից հետո բանտարկված քրդերի ազատության համար: Նրանց կողմնակիցները անընդհատ հեռագրեր էին ուղարկում Անկարա՝ պահանջելով անհապաղ ազատ արձակել բանտարկյալներին: Սակայն լավ հասկանալով, որ միայն հեռագրերով չեն կարող ստիպել թուրքերին, նրանք սկսում են նաև մարտական գործողություններ վարել Երզնկա-Կամախ-Էզին գծում՝ հասնելով մինչև Զարա և Տևրիկ: Եվ այս մարտավարությունը տվեց իր արդյունքը: Զբաղված լինելով հույների դեմ վճռական կռիվներով, Քենալը որոշեց գնալ զիջումների: Նրա առաջարկով ԹԱՄԺ-ը չեղյալ հայտարարեց Սեբաստիայի արտակարգ ռազմական տրիբունալի՝ քուրդ ապստամբների նկատմամբ կայացրած դատավճիռը՝ բացառությամբ Ալիշերի և Նուրիի: Բայց նույնիսկ մահվան դատապարտված ապստամբները շուտով ազատ արձակվեցին: Այսպիսով, թեև թուրքերին հաջողվեց պարտության մատնել Քոչգիրիի ապստամբությունը, սակայն քրդերին հաջողվեց պահել Դերսիմը:

Քոչգիրիի ապստամբության պարտությունը բնական էր և կանխորոշված: Քրդերն ամենևին չէին սպասում թուրքերի կողմից ապստամբության այդպիսի արագ, վճռական և դաժան ճնշմանը, մտածելով, որ վերջիններս ի վիճակի չեն լինելու կռվել երկու ճակատով, և վախենալով, որ ապստամբներին օգնության կգան բրիտանական ու ֆրանսիական զորքերը, կնախընտրեն բավարարել Դերսիմին ինքնավստիան շնորհելու պահանջը: Սակայն նրանք չարաչար սխալվեցին իրենց հաշվարկներում: Դերսիմը շատ մոտ էր գտնվում Կենտրոնական Ասատուլիային, որտեղ ծնվել էր քենալական շարժումը: Քրդերի հաղթանակը կարող էր մահացու սպառնալիք ստեղծել այդ շարժման համար: Հասկանալի էր, որ Անկարայի իշխանությունը բոլոր հնարավոր և անհնարին միջոցներով (հունական ձակատից հեծելազորային դիվիզիայի և բրիգադի տեղափոխումը Դերսիմ) պետք է կանխեր քրդերի հաղթանակը: Բացի այդ, արևմուտքից Դերսիմը սահմանակից էր թուրքաբնակ վիլայեթներին, ինչն էլ նպաստեց ուժերի արագ հավաքմանը և ապստամբության արագ ճնշմանը: Թուրքերը խելացի կերպով օգտագործեցին նաև Դերսիմի և Արևմտյան Հայաստանի սուննի քրդերի կրոնական և լեզվական տարբերությունները և հասան նրան, որ սուննիների գերակշիռ մասը չաջակցեց ապստամբությանը, իսկ որոշ ցեղեր միացան կառավարությանը և մասնակցեցին նա ճնշմանը: Թուրքերը Դերսիմին շրջակա վիլայեթներում շրջանառության մեջ էին դրել այն գաղափարը, որ ապստամբությունն ուղղորդում են մուսուլմանների ռևոլյուցիոնար անգլիացիները և ֆրանսիացիները, որոնք ցանկանում են կործանել խալիֆի պետությունը և բարեպաշտ մուսուլմանների վզին անհավատների լուծը դնել: Եվ այդ ենթատեքստում շեշտվում էր այն միտքը, որ անհավատների օգնում են նաև անհավատ զազա քրդերը:

Չնայած այն հայտարարություններին, որ Արևմտյան և Արևելյան Դերսիմները անհրաժեշտության դեպքում միասին կարող են մինչև իննսուն հազար զինված մարտիկ դուրս բերել մարտի դաշտ, Քոչգիրիի ապստամբներին օգնության գնաց ընդամենը 3-4 հազար մարդ, իսկ մնացած մասը սպասողական դիրք բռնեց: Ավելին, երբ թուրքական զորքերը և լազ վարձկանները սկսեցին դաժանորեն ճնշել ապստամբությունը, նրանցից շատերը հետ կանգնեցին ապստամբներին օգնության գնալու մտքից:

Քոչգիրիի ապստամբներին օգնության չհասան նաև Մալաթիայի և Խարբերդի ակի քրդերը, որոնք խոստացել էին Դերսիմի ձյունները հալվելուն պես մեծաքանակ

ջոկատներով գնալ Դերսիմ: Այս ամենը թույլ տվեց թուրքերին ընդամենը հինգ հազարանոց կանոնավոր բանակով մեկ ամսվա ընթացքում ջախջախել ապստամբությունը: Այն փաստը, որ հույների դեմ կատաղի մարտերի ժամանակ թուրքերը կարող էին իրենց թույլ տալ զորքեր հանել ձակատից և նետել Դերսիմ, բավական էր, որ շատ ցեղապետեր հասկանալիս, որ նրանք ոչ մի դեպքում չեն գիջելու:

Քոչգիրիի ապստամբությունն օգնություն չստացավ ոչ Մեծ Բրիտանիայից, և ոչ էլ Ֆրանսիայից, իսկ հույներն արդեն ի վիճակի չէին այնպիսի սպառնալիք ստեղծել թուրքերի համար, որ նրանք նախընտրեին գնալ բանակցությունների քրդերի հետ, քան արևմտյան ռազմաձակատից զորքեր նետել Դերսիմ:

Այսպիսով, հանրագումարի բերելով վերոնշյալ իրադարձությունները՝ կարելի է ենթադրել, որ Դերսիմի քրդերի համագործակցությունը արտաքին ուժերի, այդ թվում՝ Հայաստանի հետ տեղի չունեցավ, քանի որ.

1. Հայաստանի Հանրապետության և Դերսիմի միջև ընկած մեծ տարածության վրա, որտեղ տեղակայված էր բազմաքանակ քենավական բանակը, բնակվում էին սուննի քրդերը, որոնք հավասարապես թշնամաբար էին տրամադրված ինչպես հայերի, այնպես էլ զազա քրդերի նկատմամբ, և այդպիսի պայմաններում կապ հաստատելը զուգորդված էր սահելի դժվարությունների ու ռիսկերի հետ: Իսկ ֆինանսատնտեսական և ռազմական օգնության մասին խոսք անգամ չէր կարող լինել: Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր այնպիսի ծանր ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակում, որ ի վիճակի չէր օգնելու Դերսիմի ապստամբներին:

2. Առանձնահատուկ ցանկանում ենք անդրադառնալ հայկական բանակի և հատկապես նրա հետախուզության վրա: Գտնվելով կայացման փուլում ՀՀ հետախուզությունը դեռ չուներ այնքան ներուժ, որպեսզի կարողանար լուծել այդպիսի բարդ խնդիրները: Սահմանային անընդհատ բախումներն Ադրբեջանի և Թուրքիայի հետ, մահմեդական և բոլշևիկյան խռովությունները ստիպում էին հայկական բանակին իր ողջ ներուժը ծախսել տակտիկական խնդիրներ լուծելու համար:

3. Դերսիմի քրդերի՝ Հայաստանի Հանրապետության հետ կապեր չհաստատելը կարող է ունենալ մի քանի բացատրություն: Առկա էր չլուծված հողային հարցը, ինչպես նաև քրդերի հիմնավորված թերահավատությունը հայերի ներուժի նկատմամբ: Ոչ պակաս կարևոր է նաև այն հանգամանքը, որ Դերսիմի առաջնորդների մեջ կային հայերի հետ համագործակցության հակառակորդներ, ինչպես, օրինակ՝ Հասան Հայրին:

Քոչգիրիի ապստամբության հետ միաժամանակ ընթացած հայ-թուրքական պատերազմի ընթացքում երկու ժողովուրդների ուժերի չմիավորման պատճառների ուսումնասիրությունն այսօր էլ կարևոր նշանակություն ունի նրանց համար: Երբ քրդերի զինյալ պայքարի ներկա հանգրվանում թուրքական բանակի գնալով ավելի ու ավելի խոշոր խմբավորումներ են կաշկանդվում ինչպես Թուրքիայի Հանրապետության կողմից վերահսկվող տարածքներում, այնպես էլ Սիրիայի և Իրաքի հյուսիսային շրջանների սահմանագծին, ակնհայտ է դառնում, որ այդ իրողությունն օբյեկտիվորեն նպաստում է Հայաստանի Հանրապետության ու Արցախի դեմ ուղղված ադրբեջանական ագրեսիային գործուն աջակցություն ցուցաբերելու՝ Անկարայի հնարավորությունների սահմանափակմանը: Իրենց հերթին՝ քրդերն այսօր լավ են գիտակցում, որ զսպելով Թուրքիայի ու Ադրբեջանի համաթուրանական նկրտումները, Հայաստանն օբյեկտիվորեն իր նպաստն է բերում է նրանց պայքարին:

Աբրամ Ս Սայիյան – գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ թուրք-քրդական, հայ-թուրքական և հայ-քրդական հարաբերություններ: Հեղինակ է 1926–1930 թթ. Արարատի ապստամբության պատմությանը նվիրված մեկ մենագրության և բազմաթիվ հոդվածների:

Summary

DERSIM DURING THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920

Lessons from the Kochgiri uprising

Aram S. Sayiyan

Key words – Dersim, the Republic of Armenia, Turkey, Kurdistan, Turkish-Armenian war, Mustafa Kemal, Bolshevik Russia, Kars, Said Riza, Mehmet Nuri Dersimi, Nureddin Pasha.

The situation in Dersim was quite explosive in 1919. Negotiations in Paris between the Ottoman Empire and the victorious powers, which discussed the transfer of some part of the eastern vilayets to the Republic of Armenia, as well as the nationalist movement in Anatolia under the leadership of Mustafa Kemal, caused serious concern not only in Dersim but also among the Shiite Kurds in Arabkir and Malatia. Britain, which was also initially concerned about M. Kemal's success, sent an intelligence officer named Noel to the region. Taking advantage of this, a number of Kurdish tribal leaders organized a council of leaders with Noel's participation in a place called Shiro in the vicinity of Malatia, during which the principles of independent Kurdistan were declared, and preparations for an anti-Kemalist riot were also initiated. However, Mustafa Kemal managed to disperse the rebels, but the people of Dersim were determined. In early 1920, at the head center of the congregation of Hossein Abdal, a number of tribal leaders vowed to fight for the independence of Kurdistan. Without the necessary forces Mustafa Kemal was forced to yield to them, appointing some of the leaders as deputies or kaymakams of the TBMM. However, this move did not give the expected result. At the end of the summer and in autumn of 1920, the rebels of Dersim, led by Seid Riza, Alishan, Alisher and others, attacked the camps and warehouses of the Turkish army in the Erzincan vilayet. However, the majority of Kurds in Western Armenia remained loyal to M. Kemal and took an active part in the Turkish-Armenian war, which began on September 23, 1920. And when the Turkish troops approached Kars, the Dersim rebels one by one defeated the Kemalists. However, these two forces fighting with the Turks could not unite against the common enemy, which had catastrophic consequences for both sides. On December 2, 1920, according to the Treaty of Alexandropol, Armenia acknowledged its defeat, after which the Kemalists transferred the Turkish troops to Dersim and, before the beginning of June 1921, defeated the rebels. The study of the reasons for the failed Armenian-Kurdish cooperation is of great practical importance for the two peoples.

ДЕРСИМ ВО ВРЕМЯ ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920-ГО ГОДА

Уроки восстания Кочгири

Арам С. Саиян

Ключевые слова – Дерсим, Республика Армения, Турция, Курдистан, турецко-армянская война, Мустафа Кемаль, большевистская Россия, Карс, Саид Риза, Мехмет Нури Дерсими, Нуреддин паша.

В 1919-ом году ситуация в Дерсима была взрывоопасна. Переговоры в Париже между Османской империей и победившими державами, где обсуждался вопрос о передаче части восточных вилайетов Республики Армении, а также националистическое движение в Анатолии под руководством Мустафы Кемалю, вызывали серьезное беспокойство не только в Дерсима, но и среди курдов- шиитов в Арабкире и Малатии. Великобритания, которая изначально также была обеспокоена успехами М. Кемалю, отправила в регион майора разведки Ноэля. Воспользовавшись этим, ряд курдских племенных вождей организовали в месте под названием Широ в окрестностях Малатии совет вождей с участием Ноэля, во время которого были объявлены принципы независимого Курдистана, а также были начаты подготовительные работы для анти-кемалистского восстания. Мустафе Кемалю удалось разогнать повстанцев, но дерсимцы были настроены решительно. В начале 1920-го года в головном центре религиозного общества Хоссейна Абдала ряд племенных лидеров поклялись бороться за независимость Курдистана. Мустафа Кемаль, не обладая необходимыми силами, был вынужден пойти им навстречу, назначив некоторых из лидеров депутатами ВНСТ или каймакамами. Однако этот шаг не дал ожидаемого результата. В конце лета и осенью 1920 повстанцы Дерсима, возглавляемые Сеидом Ризой, Алишаном, Алишером и другими, атаковали лагерь и склады турецкой армии в санджаке Эрзинджана. Однако большинство курдов в Западной Армении оставались верными М. Кемалю, и принимали активное участие в турецко-армянской войне, которая началась 23-го сентября 1920-го года. А когда турецкие войска приближались к Карсу, повстанцы Дерсима один за другим побеждали кемалистов. Однако эти две силы борющиеся с турками не смогли объединиться против общего врага, что имело катастрофические последствия для обеих сторон. 2 декабря 1920-го года, согласно Александропольскому договору, Армения признала свое поражение, после чего кемалисты перебросили турецкие войска в Дерсим и до начала июня 1921-го года победили повстанцев. Изучение причин неудавшегося армяно-курдского сотрудничества сегодня имеет большое практическое значение для двух народов.

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

ԹԵ (ԺԵ) ԴՊՈՒՐԻ, ԹԻՎ 4 (60), ԽՈՒՐԵԿԵՐ-ՊԵՐԿԵՐԵՐ, 2017

ՀՀ ԿԱՆԱԿԱՅԻՆԻԿԱՆ ԽՈՒՐԵԿԵ